

Իստանաճալաք Առտղիկ Նաղարայանի ժէշիած-
նի ե Աշաարակի բանահյուսությունից ժողովա-
ծուն երկար տարիների բանահաճաքչական եռան-
դուն աշիատանքի արդյունք է:

Ասադիկ Լևոնի Նաղարյանը ծնվել է 1907 թ. էջմիածնում: Հայրը՝ րնիկ էջմիածնեցի Լևոն Նաղարյանը, ավարտել է սեղի ծխական գլորոցը, մայրը՝ աշտարակցի Վարսենիկ Նաղարյանը, նույնպես զրադկա է հղել: Մինչև երկուսների չափահաս դառնալը Նոդարյանների ընտանիքն ապրել է էջմիածնում, իսկ ամուսն ու աշնան ամիսներին՝ Աշտարակում:

Ա. Նագասրյանի մանկությունը հավասարապես անցել է ե՛ր էջմիածնում, ե՛ր Աջաարակում: Բնաշիրարհի այս երկու վայրերում էլ մեծերից՝ պապից, տատից ու մյուս հարազաններից և հարեաններից ուշիմ ու ապավովորդ ազդեական ունկրներով և ուղի և ողջագրական այլ շրջանների բանահյուսության հարուստ բաղմագան նյութեր (հերիաթ, առած-տառայվածք, առակ, սվանգու-թյուն, հանելուկ, շուսահուկուկ և այլն), անգիր արվել ու մտադրահիլ ահակուն ժամանակ:

Այլարտուկով էջմիածնի մանկավարժական ուսումնարանը, Ա. Նաղարյանը սովորել է Նրեանի մանկավարժական ինստիտուտի հետակա բաժնի լիզվապրակտն ֆակուլտետում: Բարձրագույն կրթություն ստանալով, նա երկար ժամանակ աշխատել է էջմիածնի շրջանի Այգեշառ գյուղի գյուղացում՝ որպես հայոց լիզվի և գրականության գալատու:

Ա. Նաղարյանը, ալրբելով ու աշխատելով պտուղական միջավայրում, մոտիկից ծանոթանալով դյուղի նիստուկոցին, սիրել է հայ ժողովրդական բառն ու բանը և մեծ ջանասիրտությամբ ձեռնամուխ եղել բանահավաքական աշխատանքին։ Ունենալով արաականագ հիշողություն, նա կարողացել է վերականգնել գեոսս մանկության աարինրին ունկնդրած նյութերը։ Միաժամանակ, շրբ-

Հագայիլ է գյուղերը, գրի առել նոր նյութեր և համարել իր հավաքածուն։ Ա. Նաղարյանի՝ հիշողությանս բերված շատ նյութերում ասացողները չեն հիշասակված, այգալիսիք են՝ Աշտարակի և էջմիածնի մանկատների սաների խմբակուն երգերը, հիշյալ շրջանների ուխտաաղիներում, գյուղական հարսանիքներում, զանազան առիթներով կալմակերպված տոնախմբություններում լսած երգերը, րաբակի գաշաբերում և խաղողի այգիններում աշխատանքների ժամանակ կաարված երգերը և խաղիկները, ինչպես նաև զանազան առիթներով ասված առած-առացվածքները, հանելուկներն ու շուաասելուկները։

Ժողովածուի գերակշռող մասը կաղմում են երգերն ու խաղիկները՝ թվով 308 հատ, Երգերն իրենց բովանդակությամբ ու բնույթով խիստ բաղմալի են, Մեծ թիվ են կաղմում սիրտ երգերը, կան նաև ղինվորի, կենցաղային-երգիծական, պանդխտության, ինչպես նաև նոր ջրջանի երգեր:

Թեև երգերի գրառման վայրերը վարչա-առ-
վածքային առանձնացում էջմիածին-Աշտարակի շր-
ջաններն են, բայց ընգրկվում են նաև 1914—
1915 թթ. համաշխարհային առաջին պատերազմի
և Մեծ եղեռնի հետևանքով այստեղ աղուփոխված
պաամական Հայաստանի աղագրական մի շարք
շրջանների (Ալաշկերտ, Մուշ, Վան, Պարսկահայք
և այլն) երգերը:

Ժողովածուի նյութերի գրառման ժամանակն
ընգրկում է 1920-ական թվականներից մինչև
1950—60-ական թվականները, Բուռ ժողովրդա-
կան-գեղջկական երգերի կողքին տեղ են գտել նաև
ժամանակին աարածում գաած քաղաքային եր-
գերը:

Թե՛ աղեղական և թե՛ Լիբեմայան Հայաստանից
բերված երգերն ընգհանուր գծեր ունեն հայ բա-
նահյուսություն ավանդական երգերի հետ, կան
բաղմամբիվ տարրերականներ ու նմանակներ նույնը

վերարերում՝ է նաև առած-ասացվածքներին ու հանելուկներին: Ժողովածուի նյութերի բանահյուսական արժեքը պետք է տեսնել պատմական այդ ժամանակահատվածում տարբեր աղբազրական շրջանների նյութերի համաանդ կենցաղավարման, փոխազարձ ներթափանցումների, ընդհանրությունների ու ամբերությունների մեջ:

Նրգերի ժողովածուի մեջ ներկայացված են՝ ավանգական, ապա նոր շրջանի նյութերը: Ներքին խմբավորում և ենթաբաժիններ չեն սահղծված, հաշվի առնելով, որ գերակշռող մասը սիրո երգեր են և որոշ իմաստով էլ այդ ստորաբաժանումները պայմանական են:

Խաղիկները ղասակարգված են ըստ Մ. Աբեղյանի «Ժողովրդական խաղիկներ» ժողովածուում ընգտնված կարգի՝ քառատողի վերջին բառի վերջին առոի այբբենական հերթականությամբ:

Առած-ասացվածքները գասակարգված են ըսկըզընաառոի այբբենական համակարգով:

Ժողովածուի նյութերի բարբառային-հնչյունաբանական-քերականական առանձնահատկությունները պահպանված են այնպես, ինչպես բանահավաքը պահպանել է իր գըառումներում:

Ժողովածուի վերջում տրված են բարբառային և օաար բառերի բառարան ու երգերի նոտագրված մի քանի նմուշներ:

Ա. ՆԱԶԻՅԱՆ